«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի

EduArmenia կրթական նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2023

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ներառական կրթության ոլորտում որո՞նք են ԿԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացման առանձնահատկությունները

Հետազոտող ուսուցիչ՝ Ալինա Թադևոսյան

(Շիրակի մարզ, Շիրակավանի միջնակարգ դպրոց)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....
3
1.Ներառական կրթության ոլորտում որո՞նք են ԿԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացման առանձնահատկությունները.....4
1.1 Հետազոտական աշխատանքի իրականացման բնութագիր.....10
1.2 Հարցումների արդյունքների վերլուծություն.....13
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....37
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 39

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպես հայտնի է անձի ձևավորման հիմքում ընկած է սոցիալականացման գործընթացը: Այն ենթադրում է արժեքների, փորձի, հասարակական նորմերի յուրացում: Անցնելով սոցիալական ինստիտուտներով մենք դառնում ենք հասարակական էակ: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան անմասն չէ սոցիալականացման գործընթացից: Երեխայի կյանքում դպրոցական շրջանը շատ կարևոր է սոցիալական հարաբերությունների ձևավորման և նրանց սոցիալականացման համար: Երեխայի կողմից սոցիալական փորձի յուրացումը տեղի է ունենում միայն համատեղ գործունեության և այլ մարդկանց հետ հաղորդակցվելու դեպքում: Հենց այդպես էլ երեխան ձեռք է բերում նոր գիտելիքներ և հմտություններ, ձևավորվում են սեփական համոզմունքները, հոգևոր արժեքները ու կարիքները:

Թեմայի արդիականությունը՝Համաշխարհային մոտեցումներին համահունչ՝ մեր պետությունը որդեգրել է հաշմանդամության <<սոցիալական մոդելի>> վրա հիմնված քաղաքականություն, ինչը ենթադրում է ԿԱՊԿՈՒ անձանց իրավունքների ապահովում, նրանց համար հասարակության մյուս անդամների հետ հավասար պայմանների ստեղծում: Վերոնշյալը հաշվի առնելով կարելի է ասել, որ ԿԱՊԿՈՒ երեխաների ուսուցման, սոցիալականացման և համապատասխան պայմանների ուսումնասիրման խնդիրներն իրենց նշանակությամբ առաջիններից մեկն են: ԿԱՊԿՈՒ երեխաների ուսուցումը և զարգացումը չի կարող իրականանալ առանց սոցիալականացմանն ուղղված հոգեբանամանկավարժական պայմանների ուսումնասիրման և համապատասխան միջոցառումների ձեռնարկման:

Հետազոտության օբյեկտը ներառական կրթության ոլորտում ԿԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացման առանձնահատկությունների ուսումնասիրությունն է:

Հետազոտության առարկան՝ հաղորդակցումը որպես ԿԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացման կարևորագույն տարր:

Աշխատանքի նպատակն է ԿԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացմանը միտված գործոնների բացահայտումն ու բնութագրումը, այդ գործընթացին նվիրված հոգեբանական աշխատանքների մոդելավորումը:

Աշխատանքի խնդիրները՝

1.Հետազոտել, վերլուծել և ընդհանրացնել սոցիալականացման գործընթացի հայեցակարգերը ըստ տեղի և արտերկրյա գրականության նյութերի

2.Հետազոտել և ամփոփել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների սոցիալականացմանը խոչընդոտող և նպաստող հոգեբանական պայմաններն ու գործոնները:

3.Ընտրել ԿԱՊԿՈՒ երեխայի սոցիալականացման հետազոտման համապատասխան մեթոդներ:

4.Ստացված տեսական և փորձարարական արդյունքների ընդհանրացման միջոցով բացահայտել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների սոցիալականացման առանձնահատկությունները և կատարել համապատասխան եզրակացություններ:

Հետազոտության վարկածը կայանում է նրանում, որ հաղորդակցումը հաջող սոցիալականացման ամենաարդյունավետ մեխանիզմներից մեկն է և հաղորդակցման ռազմավարությունների արդյունավետ օգտագործումը կնպաստի ԿԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացմանը:

Գիտական նշանակությունը

Աշխատանքում օգտագործվել են հետևյալ մեթոդները՝ մասնագիտական գրականության վերլուծություն, դիտում, զրույց, անկետավորում (բաց, փակ, կիսափակ հարցերով անկետաների կիրառում), թեստավորում, որոնց հիման վրա անցկացվել է համեմատություն և կատարվել համապատասխան ընդհանրացումներ:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Մագիստրոսական թեզը կազմված է ներածությունից, երեք՝ տրամաբանորեն փոխկապակցված գլուխներից (8 ենթագլուխներից), եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածից: Աշխատանքի ծավալը 86 համակարգչային էջ է:

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՊԿՈՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹ-ՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱ-ԳՐՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի իրականացման նպատակով մեր կողմից ընտրվել է Գյումրու թիվ 23 միջնակարգ դպրոցը: Դպրոցում գործում է ներառական կրթության համակարգ, որտեղ ընդգրկված են 113 երեխաներ, տարրական օղակում (6-10 տարեկան)՝ 42 երեխա, միջին օղակում (10-18 տարեկան) ՝ 71 երեխա: Հետազոտական աշխատանքի թիրախային խմբի ընտրության նպատակով աշխատանքի առաջին փուլում իրականացվեցին դիտարկումներ, անցկացվեցին զրույցներ՝ ուսումնասիրվող խմբի վերաբերյալ տեղեկատվության ստացման համար, բազմամասնագիտական թիմի հետ քննարկումներ և հարցումներ: Արված ուսումնասիրությունների հիման վրա որոշվեց հետազոտությունն անցկացնել ներառական կրթության համակարգում ընդգրկված տարրական օղակում սովորող չորրորդ դասարանի աշակերտների հետ: Դպրոցում շատ կարևոր է երեխայի սոցիալական գործունեության ձևավորումը սկսել հենց տարրական օղակից, որն էլ հետագայում կօգնի նրանց դառնալ հասարակության լիիրավ անդամ: Դպրոցի տարրական

օդակում երեխաների մոտ զարգացած է շփման հուզական կողմը, նրանք դեռևս չունեն գիտելիքների բարձր մակարդակ, զարգացած սոցիալական փորձ, և նրանց վարքը հիմնականում որոշվում է նմանակման միջոցով: Այս տարիքում նպատակահարմար է, երեխաների զգացմունքների և այդ թվում՝ գործունեության տարբեր տեսակների վրա ազդելով, ընդլայնել բարոյական գիտելիքների շրջանակը, օգնել հասկանալ և ճանաչել այլ մարդկանց զգացմունքները: ԿԱՊԿՈՒ երեխայի զարգացման մակարդակը չի համապատասխանում տիպական զարգացում ունեցող երեխայի զարգացման մակարդակին, նրանց բնորոշ է ուշադրության ռեսուրսների արագ սպառումը, հիշողության ծավալների նվազեցումը, հուզական անկայունությունը, ուսումնական գործունեության արտաքին մոտիվացիայի և ճանաչողական հետաքրքրության նվազեցումը: Այդ պատճառով անհրաժեշտ է կիրառել սոցիալական ակտիվության ձևավորման, երեխաների շփման և նրանց համարժեք վարքագծի դրսևորման հատուկ միջոցներ: Կանոնակարգված ակտիվ գործունեությունը օգնում է վերացնել ԿԱՊԿՈՒ երեխաների ամաչկոտությունը, անինքնավստահությունն ու կասկածանքը, փոխօգնության, վստահության, բարյացակամության մթնոլորտը, հասակակիցների ճանաչումն ու հարգանքը նպաստում է ԿԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացմանը:

Աշխատանքի երկրորդ փուլում ի սկզբանե առաջադրված վարկածի հաստատման կամ հերքման նպատակով անցկացվեց ձևավորող գիտափորձ և մի շարք այլ մեթոդներ՝

- դիտում
- զրույց
- անկետավորում (բաց, փակ, կիսափակ հարցերով անկետաների կիրառում)
- թեստավորում, որոնց հիման վրա անցկացվեց համեմատություն և կատարվեցին համապատասխան ընդհանրացումներ:

Դպրոցում գործում էին երեք 4-րդ դասարաններ, որտեղ ներառական կրթության համակարգում ընդգրկված երեխաների ընդհանուր թիվը 20 էր: Երեխաների մոտ առկա խնդիրները ներկայացված է գծապատկեր 1-ում:

Գծապատկեր 1: 4-րդ դասարանում սովորող ներառական կրթության համակարգում ընդգրկված երեխաների խնդիրները:





Երեխաների հետ աշխատելիս էր բազմամասնագիտական [illegible] հետ իրականացվող աշխատանքների արդյունավետության համար բազմամասնագիտական թիմը փորձում էր համագործակցված աշխատել նաև ուսուցիչների ու ծնողների հետ:

Գծապատկեր **2**:

Յուրաքանչյուր երեխա ուներ հատուկ մշակված անհատական ուսումնական պլան (ԱՈՒՊ), որն ուղեցույց էր երեխաների հետ աշխատող մասնագետների և ծնողների համար: Այն նպաստում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների անհատական ուսուցումը հանրակրթական դպրոցներում արդյունավետ կազմակերպմանը և դրանով իսկ երեխաների կրթական, սոցիալական և այլ հատուկ կարիքների բավարարմանը: ԱՈՒՊ-ի նպատակն այն էր, որ երեխան ձեռք բերեր հիմնական հմտություններ, որոնք կօգնեին դառնալ ինքնուրույն և ինքնավստահ: Օրինակ՝ հաղորդակցման, ինքնասպասարկման, սոցիալական, կարդալ-գրելու, լսելու, կենտրոնանալու, ասոցացիաներ ստեղծելու և այլ ունակություններ:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝

- ծանոթանալ դպրոցում հերառական կրթության իրականացման պայմաններին, աշխատանքների կազմակերպմանն ու իրականացման ձևերին,
- իրականացնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ տարվող աշխատանքների ուսումնասիրություն և վերլուծություն,

- ուսումնասիրել ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքի ձևերը, մեթոդները ու մեխանիզմները և դրանց կիրառման առանձնահատկությունները,
- ուսումնասիրել ԿԱՊԿՈՒ երեխայի սոցիալականացման առանձնահատկությունները,
- զարգացնել երեխաների շփման, հաղորդակցման հմտությունները,
- անցկացնել հարցումներ ուսուցիչների, բազմամասնագիտական թիմի, ծնողների շրջանակներում՝ նախօրոք մշակված անկետաների կիրառմամբ:

Հետազոտության ընթացքում իրականացվեցին անհատական և խմբային աշխատանքներ: Կախված երեխաների առանձնահատկություններից, կարիքներից, ընդունակություններից կիրառվեցին տարբեր մեթոդներ՝ լիցքաթափող վարժություններ, խաղ- վարժանքներ, դիդակտիկ պարագաներ, զրույց, խոսքի, մտածողության, երևակայության, ուշադրության, հիշողության, մոտորիկայի զարգացման մեթոդներ, արտ-թերապևտիկ մեթոդներ՝ հեքիաթաթերապիա, նկարչաթերապիա, երաժշտաթերապիա, խաղային թերապիա:

Երեխաների հաղորդակցման մակարդակի բացահայտման, հուզական ոլորտի խանգարումների, սոցիալականացման մակարդակի և այլ խնդիրների բացահայտման և հոգեշտկման համար 4-րդ դասարանի 40 աշակերտի հետ կիրառվեցին տարբեր մեթոդներ՝

- «Հաղորդակցում՝ նկարների փոխանակման միջոցով» մեթոդիկա
- «Օգնության ձեռքեր» վարժություն
- «Դպրոցի նկար» պրոյեկտիվ թեստ

«Հաղորդակցում՝ նկարների փոխանակման միջոցով». Այն նախատեսված էր ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելու համար: Այս մեթոդը էական միջոց է ԿԱՊԿՈՒ երեխաներին հաղորդակցում սովորեցնելու համար: Այն մշակվել է 1994թ-ին Բոնդի և Ֆրոստի կողմից՝ որպես հաղորդակցման միջոց այն երեխաների հետ, որոնք չունեն բավականաչափ խոսքային ունակություններ: Այն հիմնված է ազդակ-հակազդակ-խրախուսանք սկզբունքի վրա: Մեթոդը բաղկացած է վեց շարունակական և համակարգված փուլերից:

Այս մեթոդի առաջին փուլը համբ փուլն էր, որի ժամանակ հրահանգվում էր երեխային փոխանակել նկարն այն առարկայի հետ, որն ուզում էր: Այս փուլն օգնում էր երեխային կապ ստեղծել իրական առարկաների և նրանց պատկերների միջև:

Երկրորդ փուլում երեխան սովորում էր «հաղորդակցվել»՝ վերցնելով նկարը և տալով մասնագետին ցանկալի առարկայի դիմաց: Այս փուլի որոշակի հատվածում մասնագետը հեռանում էր երեխայից, որպեսզի

նա հասկանար, որ պետք է ֆիզիկական ջանք գործադրել՝ վեր կենալ, մոտենալ տախտակին, վերցնել համապատասխան նկարը և այլն, որպեսզի ստանա ցանկալի առարկան:

Երրորդ փուլում երեխան սովորում էր տարբերակել գործողությունների և առարկաների համար նախատեսված նկարները, օրինակ՝ մատիտները ստանալու համար երեխան պետք է բերեր այն նկարը, որտեղ պատկերված էին մատիտներ:

Չորրորդ փուլը «Նախադասություններ կազմել» սովորեցնելու փուլն էր: Առաջին նախադասությունը «ես ուզում եմ»-ն էր: Մասնագետը ցույց էր տալիս երեխային, թե ինչպես պետք է կազմել նախադասությունը՝ սկզբում դնելով «ես ուզում եմ»-հատվածը, իսկ վերջում՝ համապատասխան նկարը: Երբ երեխան պատկերներով կազմում էր նախադասությունը, մասնագետը բարձրաձայն կարդում էր այն՝ նկարների և բանավոր խոսքի միջև կապ ստեղծելու համար:

Հինգերորդ փուլում մասնագետը հարցնում էր՝ «Ի՞նչ ես ուզում», իսկ երեխան կազմում էր համապատասխան նախադասությունը:

Վեցերորդ փուլում երեխան սովորում էր կազմել այլ նախադասություններ, օրինակ՝ «Ես տեսնում եմ խաղալիքներ», «ես սիրում եմ պաղպաղակ»: Երբ երեխան սովորել էր հմտությունը, նախադասությունը կարելի էր բարդացնել: Այս մեթոդիկայի օգնությամբ, կարելի էր նաև սովորեցնել ցանկալի վարք, դասարանի կանոններ և այլն:

Հաղորդակցում նկարների փոխանակման միջոցով մեթոդիկան կիրառելով ԿԱՊԿՈ-ն երեխաների հետ ունեցանք դրական փոփոխություններ երեխաների վարքում և կրթական համակարգում նրանց ներառման տեսանկյունից: Այս մեթոդը օգնում է այն երեխաներին, որոնք չունեն բավականաչափ խոսքային ունակություններ: Մեթոդը օգնում է հաղորդակցվել երեխաների հետ, ստեղծելով հաղորդակցման դրական մթնոլորտ, նաև վստահություն և համագործակցություն հետագա աշխատանքներում, կապ ստեղծել իրական առարկաների և նրանց պատկերների միջև: Երեխան սովորում է տարբերակել գործողությունների և առարկաների համար նախատեսված նկարները: Այս մեթոդիկայի օգնությամբ, կարելի է նաև սովորեցնել ցանկալի վարք, դասարանի կանոններ և այդ ամենը նպաստում է երեխայի սոցիալականացմանը:

«Դպրոցի նկարը» պրոյեկտիվ թեստ

Նպատակն էր պարզել երեխայի՝ դպրոցի հանդեպ ունեցած վերաբերմունքը, հարմարվածության մակարդակը:

Երեխային տրվում էր թուղթ, գունավոր մատիտներ և հրահանգվում թղթի վրա նկարել իր դպրոցը, դպրոցում իր տեղը, դասընկերներին և այն ամենը, ինչ երեխան կապում էր դպրոցի հետ: Նկարելու ընթացքում զրույցի պատասխանները գրանցվում էին:

Երեխայի՝ դպրոցի հանդեպ ունեցած վերաբերմունքը գնահատվում էր երեք հիմնական ցուցիչներով.

- Գունային գամմա
- Գծեր, նկարի բնույթ
- Նկարի սյուժե

Նկարի վերլուծության ընթացքում յուրաքանչյուր ցուցիչի համար կոնկրետ թվային գնահատական էր տրվում:

Գունային գամմա:

2 միավոր- գերիշխում են վառ գույները, բաց երանգները՝ դեղին, բաց կանաչ, երկնագույն և այլն:

1 միավոր- կան և՛ մուգ, և՛ բաց երանգներ

0 միավոր մուգ երանգները՝ շագանակագույն, սև, գերիշխում են

Գծերը և նկարի բնույթը:

2 միավոր- օբյեկտները մանրակրկտորեն նկարված են, օգտագործվել են տարբեր հաստության՝ երկար բարակ գծեր:

1 միավոր- պատկերները ավարտուն չեն, երբեմն հանդիպում են ընդհատված գծեր և հստակ երևացող պատկերներ:

0 միավոր- պատկերները հստակ չեն երևում, գծերը կրկնակի են, նույն երկարության, հաստության:

Նկարի սյուժեն:

2 միավոր- սիմետրիկ նկար, դպրոցի նկարը կենտրոնում է, առկա են զարդարանքներ, ծաղիկներ, երեխաները գնում են դպրոց կամ նստած են նստարանի մոտ, տարվա եղանակը՝ գարուն, ամառ, արև է:

0 միավոր- նկարն ասիմետրիկ է, բացակայում են դետալները, զարդարանքները, չկան մարդիկ, կամ երեխաներ, տարվա եղանակը՝ ձմեռ, աշուն, մռայլ է:

1 միավոր- երկու բնութագրերն էլ առկա են:

Արդյունքների վերլուծություն:

6-5 միավոր- երեխայի մոտ առկա է բարենպաստ հուզական վերաբերմունք դպրոցի, ուսուցման, դասընկերների հանդեպ, նա պատրաստ է համագործակցել ուսուցչի հետ:

4-2 միավոր- երեխան վախեր ունի դպրոցի, ուսուցման հետ կապված: Անհրաժեշտ է դրական վերաբերմունք ձևավորել ուսուցչի և աշակերտների հանդեպ, պատճառը կարող է լինել բացասական փորձը:

1-0 միավոր- երեխայի մոտ ակնհայտ արտահայտված վախ կա դպրոցի հանդեպ, ինչը հանգեցնում է դժվարությունների ուսուցչի և դասընկերների հետ հարաբերություններում: [6; 92-94]

«Դպրոցի նկարը» պրոյեկտիվ թեստի նկարների վերլուծության արդյունքում 23 աշակերտի երեխայի մոտ առկա էր բարենպաստ հուզական վերաբերմունք դպրոցի, ուսուցման, դասընկերների հանդեպ, նրանք պատրաստ էին համագործակցել ուսուցչի հետ (6-5 միավոր), 17 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներից 11 աշակերտի մոտ առկա էր վախեր դպրոցի, ուսուցման հետ կապված (4-2 միավոր), իսկ 6 աշակերտի մոտ ակնհայտ արտահայտված վախ կար դպրոցի հանդեպ, ինչը հանգեցնում էր դժվարությունների ուսուցչի և դասընկերների հետ հարաբերություններում (1-0 միավոր): Անկախ թեստի բուն նպատակից, արդյունքների վերլուծության ընթացքում պարզ դարձավ, որ երեխաներն ունեն նաև սոցիալականացման, հարմարման հետ կապված դժվարություններ, որոնք պայմանավորված էին երեխաների ունեցած բացասական փորձով: Անհրաժեշտ է դրական վերաբերմունք ձևավորել ուսուցչի և աշակերտների հանդեպ, որպեսզի հաղթահարվի այն բոլոր արգելքները, որոնք խոչընդոտում են ԿԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացմանը:

Գծապատկեր 3



«Օգնության ձեռքեր» վարժություն

Վարժության նպատակն էր կարևորել փոխօգնության գաղափարը ընկերության մեջ, զարգացնել հաղորդակցման հմտությունները:

Այս վարժության ժամանակ երեխաները մատիտով ուրվագծում էին իրենց ձեռքի երկու ափերը, այնուհետև կտրում մկրատով, մեկի վրա գրում էին իրենց անունը, մյուսի վրա այն դասընկերներին, ում նրանք համարում էին իրենց ընկերները, ովքեր իրենց օգնել էին կամ ընդհակառակը կարծում էին, որ իրենք ընկերներ չեն: Ապա երեխաներն իրենց նկարած երկու ձեռքերը միացնում էին ծափ տալու նման, որ գրված անունները մնային ներսի կողմում: Դրսի կողմից գրում էին, թե ինչու էին նշված անուններով երեխաներին համարում իրենց ընկերը, ինչով էին իրենց օգնել, հակառակ դեպքում ինչու չեին համարում իրենց ընկերը: [12; 95]

«Օգնության ձեռքեր» վարժանքի արդյունքների վերլուծության ընթացքում պարզ դարձավ, որ ներառական կրթական համակարգում ընդգրկված երեխաներից 7-ին համադասարանցիները համարում էին իրենց ընկերները, և նրանց հետ գտնվում էին դրական հարաբերությունների մեջ, նրանք բավարար չափով ադապտացված էին համադասարանցիներիշրջանում: Երեխաներից 9-ին համադասարանցիները չէին համարում իրենց ընկերները: Դասարանում երեխաներին չէին ընդունում որպես իրենց հավասարի, ինչն էլ պատճառ էր հանդիսացել տվյալ երեխաների մոտ բացասական վերաբերմունքի ձևավորմանը: Վարժանքին մասնակցած աշակերտներից 1-ը գտնվում էր չեզոք դիրքում, այսինքն համադասարանցիներից ոչ մեկի կողմից չկար բացասական վերաբերմունք երեխայի նկատմամբ, բայց և այնպես նրան չէին էլ ընդունում որպես իրենց ընկեր: Տվյալների վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ ներառական կրթության համակարգում ընդգրկված երեխաների մեծամասնությունը՝ 53%-ը, դասարանում սոցիալականացված չէ և առկա է շփման, հաղորդակցման ցածր մակարդակ:

Գծապատկեր 4



1.2 Հարցումների արդյունքների վերլուծություն

Հարցումներն անցկացվել են Գյումրու թիվ 23 միջնակարգ դպրոցում: Կազմվել են հարցաթերթեր՝ ուղղված ուսուցիչներին, բազմամասնագիտական թիմին, ծնողներին, որոնց միջոցով փորձել ենք պարզել՝

- ☒ վերջիններիս դիրքորոշումը ներառական կրթության կազմակերպման վերաբերյալ,

- նրանց պատրաստվածության ու պատրաստակամության մակարդակը ներառական կրթության իրականացման գործում,
- ԿԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացմանը նպաստող և խոչընդոտող գործոնները,
- հաղորդակցման դերը ԿԱՊԿՈՒ երեխայի սոցիալականացման գործընթացում,
- հաղորդակցման ռազմավարությունների արդյունավետ օգտագործումը ԿԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացման գործընթացում:

Հարցմանը մասնակցել են 30 ուսուցիչ, 20 ծնող և բազմամասնագիտական թիմի անդամները՝ 5 հոգեբան, 6 դաստիարակ, 2 սոցիալական մանկավարժ, 1 լոգոպեդ:

Հարցաթերթերը ներառում էին այնպիսի հարցեր, որոնք երեք կողմերի համար էլ նույնական էին: Դրանք են՝ արդյո՞ք ներառական կրթությունը ենթադրում է հավասար հնարավորություններ բոլոր երեխաների համար, տրվել էին հետևյալ պատասխանները. ուսուցիչներ՝ այո-9, ոչ-9, մասամբ-12, ծնողներ՝ այո-7, ոչ-5, մասամբ-8, բազմամասնագիտական թիմ՝ այո-10, ոչ-4, մասամբ-0: Տոկոսային հարաբերությամբ պատկերն այսպիսին էր. ուսուցիչներ՝ 30% այո, 30% ոչ, 12% մասամբ, ծնողներ՝ 35% այո, 25% ոչ, 40%, բազմամասնագիտական թիմ՝ 71% այո, 29% ոչ, 0% մասամբ: Պատասխաններից կարելի էր ենթադրել, որ բազմամասնագիտական թիմի անդամներից շատերը կողմ էին այն գաղափարին, որ յուրաքանչյուր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները, ունեն կրթություն ստանալու հավասար իրավունք և ներառական կրթությունը տալիս է այդ հնարավորությունը, մինչդեռ ուսուցիչներն ու ծնողները կարծում էին, որ ներառական կրթությունը մասամբ է ապահովում հավասար հնարավորություններ:

Հարցման մասնակիցների կարծիքների տոկոսային պատկերը բոլոր երեխաների համար ներառական կրթության ընձեռած հավասար հնարավորությունների վերաբերյալ: Գծ. 1:



Հաջորդ հարցը, հետևյալն էր՝ ինչպիսի՞ խնդիրներ եք տեսնում ներառական կրթության գործընթացի կազմակերպման ընթացքում: Ներկայացված էին պատասխանների հետևյալ տարբերակները՝ անբարենպաստ սոցիալական միջավայրը, ուսուցիչների համապատասխան որակավորման բացակայությունը, բացասական տրամադրվածությունը, իրազեկվածության պակասը, օրենքի անկատարությունը, թերի համագործակցությունը: Տոկոսային հարաբերությամբ բոլոր կողմերի մոտ առավել շատ հանդիպող խնդիրը իրազեկվածության պակասն էր՝ 30%, երկրորդ տեղում ծնողների և բազմամասնագիտական թիմի պատասխաններում նշված էր ուսուցիչների համապատասխան որակավորման բացակայությունը՝ 26%, մինչդեռ ուսուցիչների պատասխաններում այս պատասխանը ընտրել էին հարցվողների 13%-ը: Թերի համագործակցությունը նույնպես գերակշռող տեղ էր զբաղեցնում ներառական կրթության գործընթացի կազմակերպման ընթացքում հանդիպող խնդիրների մեջ. ուսուցիչներ՝ 23%, ծնողներ՝ 20%, բազմամասնագիտական թիմ՝ 11%: Օրենքի անկատարություն պատասխանն ընտրել էին տոկոսային հարաբերությամբ ուսուցիչներ՝ 0%, ծնողներ՝ 10%, բազմամասնագիտական թիմ՝ 26%, անբարենպաստ սոցիալական միջավայր և բացասական տրամադրվածություն պատասխանները ստացել էին հետևյալ տոկոսային պատկերը. ուսուցիչներ՝ 17%, ծնողներ՝ 15%, բազմամասնագիտական թիմ՝ 8%, համապատասխանաբար ուսուցիչներ՝ 0%, ծնողներ՝ 10%, բազմամասնագիտական թիմ՝ 7%:

Ներառական կրթության գործընթացի կազմակերպման ընթացքում հանդիպող խնդիրները: Գծ. 2







Հաջորդ հարցին, թե գործող կրթական ծրագիրը որքանո՞վ է նպաստում ԿԱՊԿՈՒ երեխայի զարգացմանը, տրվել էին հետևյալ պատասխանները. ուսուցիչներ՝ լիովին-5 մասամբ-19, այլ պատասխան-6, ծնողներ՝ լիովին-8 մասամբ-12, այլ պատասխան-0, բազմամասնագիտական թիմ՝ լիովին-3 մասամբ-11, այլ պատասխան-0: Տոկոսային հարաբերությամբ պատկերն այսպիսին է. ուսուցիչներ՝ լիովին- 17%, մասամբ- 63%, այլ պատասխան-20%, ծնողներ՝ լիովին- 40%, մասամբ- 60%, այլ պատասխան-0% բազմամասնագիտական թիմ՝ լիովին-21, մասամբ- 72%, այլ պատասխան-7%: Հարցման արդյունքները փաստում են այն մասին, որ հարցվողների մեծամասնության կարծիքով գործող կրթական ծրագիրը մասամբ է նպաստում ԿԱՊԿՈՒ երեխայի զարգացմանը, քանի որ դեռևս ճիշտ կազմակերպված և ամբողջովին հստակեցված չէ:







Հաջորդ հարցի համաձայն՝ ըստ Ձեզ ԿԱՊԿՈՒ երեխաների ուսումնական գործընթացի կազմակերպումը նորմալ զարգացում ունեցող երեխաների հետ նպաստու՞մ է արդյոք ԿԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացմանը, տրվել էին հետևյալ պատասխանները՝ ուսուցիչներ՝ այո-7, ոչ-9, մասամբ-12, դժվարանում եմ պատասխանել-0, ծնողներ՝ այո-7, ոչ-4, մասամբ-9, դժվարանում եմ պատասխանել-0, բազմամասնագիտական թիմ՝ այո-6, ոչ-2, մասամբ-2, դժվարանում եմ պատասխանել-0: Տոկոսային հարաբերությամբ. ուսուցիչներ՝ 23% այո, 30% ոչ, 47% մասամբ, դժվարանում եմ պատասխանել- 0%, ծնողներ՝ 35% այո, 20% ոչ, 45%, դժվարանում եմ պատասխանել- 0%, բազմամասնագիտական թիմ՝ 72% այո, 14% ոչ, 14% մասամբ, դժվարանում եմ պատասխանել- 0%: Կարող ենք նշել, որ բազմամասնագիտական թիմի անդամների մեծամասնության կարծիքով ԿԱՊԿՈՒ երեխաների ուսումնական գործընթացի կազմակերպումը նորմալ զարգացում ունեցող երեխաների հետ նպաստում է ԿԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացմանը, մինչդեռ ուսուցիչների և ծնողների պատասխաններում գերակշռում են «ոչ» և «մասամբ» պատասխանները, ինչն էլ խոսում է այն մասին, որ ծնողներն ու ուսուցիչները դեռևս համագործակցված աշխատելու և արդյունավետ նոր ուղիներ մշակելու կարիք ունեն:

ԿԱՊԿՈՒ երեխաների ուսումնական գործընթացի կազմակերպումը նորմալ զարգացում ունեցող երեխաների հետ նպաստու՞մ է արդյոք ԿԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացմանը: Գծ. 4







Հաջորդ հարցին, թե որքա՞ն է կարևորվում ուսուցչի դերը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների զարգացման գործում, տրվել էին հետևյալ պատասխանները. ուսուցիչներ՝ լիովին-11, մասամբ-19, այլ պատասխան- 0, ծնողներ՝ լիովին- 11, մասամբ- 9, այլ պատասխան-0, բազմամասնագիտական թիմ՝ լիովին- 12, մասամբ- 2, այլ պատասխան-0: Տոկոսային հարաբերությամբ. ուսուցիչներ՝ լիովին-37%, մասամբ-63%, այլ պատասխան- 0%, ծնողներ՝ լիովին- 55%, մասամբ- 45%, այլ պատասխան-0%, բազմամասնագիտական թիմ՝ լիովին- 86%, մասամբ- 14%, այլ պատասխան-0%: ԲՄԹ-ի և ծնողների կարծիքով ուսուցիչները մեծ դեր ունեն ԿԱՊԿՈՒ երեխայի զարգացման գործում, մինչդեռ ուսուցիչները մասամբ էին կարևորում իրենց դերը:

Ուսուցչի դերը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների զարգացման գործում: Գծ. 5





Կարևորում եք արդո՞ք հաղորդակցման դերը ԿԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացման գործընթացում: Ուսուցիչներ՝ այո-18, ոչ-0, մասամբ-10, դժվարանում եմ պատասխանել -2, ծնողներ՝ այո-12, ոչ-0, մասամբ-8, դժվարանում եմ պատասխանել -0, ԲՄԹ՝ այո-11, ոչ-0, մասամբ-2, դժվարանում եմ պատասխանել -1: Տոկոսային հարաբերությամբ. Ուսուցիչներ՝ այո- 60%, ոչ- 0%, մասամբ- 33%, դժվարանում եմ պատասխանել- 7%, ծնողներ ՝ այո- 60%, ոչ- 0%, մասամբ- 40%, դժվարանում եմ

պատասխանել- 0%, ԲՄԹ՝ այո- 79%, ոչ- 0%, մասամբ-14%, դժվարանում եմ պատասխանել- 7 %: Արդյունքերը փաստում են այն մասին, որ հաղորդակցումը լիովին կարևորվում է ԿԱՊԿՈՒ երեխայի սոցիալականացման գործընթացում:

Հաղորդակցման կարևորությունը ԿԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացման գործընթացում: Գծ. 6



ԲՄԹ-ին ուղղված հարցաթերթում ներառված էին երկու բաց հարցեր՝ 1. հաղորդակցման հմտությունների զարգացումը ի՞նչ դրական փոփոխությունների կարող է հանգեցնել ԿԱՊԿՈՒ երեխաների մոտ,

2. ըստ Ձեզ հաղորդակցման ինչպիսի՞ ռազմավարությունների կիրառումը կնպաստի ԿԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացմանը,

Առաջին հարցին տրվել էին հետևյալ պատասխանները՝ կապահովի առավել լիարժեք շփումը հասակակիցների հետ, երեխաների մոտ կձևավորվի բարձր ինքնագնահատական, կլինեն ավելի անկաշկանդ, համարձակ, ինքնավստահ, կնկատվի հասարակության լիիրավ անդամ լինելու գիտակցության ձևավորում, ինտեգրում: Երկրորդ հարցին՝ խմբային թերապիաներ, խոսքը զարգացնող խաղ վարժանքներ, զրույց:

Հաջորդ հարցը, որը ևս ուղղված էր բազմամասնագիտական թիմին հետևյալն էր. Որքանո՞վ է ներառականությունն օգնում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ինտեգրվել սոցիալական կյանքում: Հարցվողների կողմից տրվել էին հետևյալ պատասխանները՝ լիովին-5, մասամբ-8, այլ պատասխան- 0, տոկոսային հարաբերությամբ՝ 36 % -լիովին, 57% - մասամբ, 7% - այլ պատասխան: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ ներառականությունը լիովին չի օգնում ԿԱՊԿՈՒ երեխաներին ինտեգրվել սոցիալական կյանքում և անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել այն առավել արդյունավետ և ճիշտ կազմակերպելու համար:

Գծ. 7



Այն հարցին, թե որքանո՞վ են աշակերտները հանդուրժող հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաների նկատմամբ, բազմամասնագիտական թիմի անդամների 71 %-ը պատասխանել էին լիովին, 29 %-ը մասամբ: Սա բավականին դրական ցուցանիշ է, քանի որ շատ կարևոր է հասակակիցների վերաբերմունքը ԿԱՊԿՈՒ երեխայի նկատմամբ:

Գծ. 8



Իսկ այն հարցին, թե կա՞ խտրական և կարծրատիպային վերաբերմունք ԿԱՊԿՈՒ երեխաների նկատմամբ, բազմամասնագիտական թիմի անդամները տվել էին հետևյալ պատասխանները՝ այո- 2, ոչ- 2, մասամբ- 10, տոկոսային հարաբերությամբ՝ այո- 14%, ոչ- 14%, մասամբ- 72%: Առավել դրական կլիներ, եթե գերակշռեր ոչ թե «մասամբ», այլ «ոչ» պատասխանը, քանի որ շրջապատում առկա կարծրատիպային վերաբերմունքը բացասական է անդրադառնում երեխայի զարգացման վրա:

Գծ. 9



Հարցաթերթում ներառված հաջորդ հարցը, որն ուղղված էր ուսուցիչներին և բազմամասնագիտական թիմին, հետևյալն էր՝ արդյո՞ք ծնողների մոտ նկատվում են իրենց երեխաների և ԿԱՊԿՈՒ երեխաների համատեղ ուսուցման պատրաստակամության բացակայություն: Ուսուցիչների կողմից տրվել էին հետևյալ պատասխանները՝ այո-14, ոչ-6, մասամբ-13, դժվարանում եմ պատասխանել-0: Տոկոսային պատկերը՝ այո-47%, ոչ-23%, մասամբ-30%, դժվարանում եմ պատասխանել-0%: Իսկ բազմամասնագիտական թիմի անդամների կողմից տրվել էին հետևյալ պատասխանները՝ այո-2, ոչ-3, մասամբ-6, դժվարանում եմ պատասխանել-3: Ստացված արդյունքների տոկոսային պատկերը՝ այո-14%, ոչ-22%, մասամբ-43%, դժվարանում եմ պատասխանել-21%: Համեմատելով ուսուցիչների և ԲՄԹ-ի կողմից տրված պատասխանները կարող ենք նշել, որ տրված պատասխանները որոշակիորեն հակասում են միմյանց, քանի որ ուսուցիչների մեծամասնության կարծիքով ծնողների մոտ համատեղ ուսուցման պատրաստակամությունը բացակայում էր, մինչդեռ ԲՄԹ-ի անդամների կողմից տրված պատասխաններում գերակշռում էր «մասամբ» պատասխանը, իսկ «այո» պատասխանը ընտրվել էր ընդամենը 14%-ի կողմից:

Արդյո՞ք ծնողների մոտ նկատվում են իրենց երեխաների և ԿԱՊԿՈՒ երեխաների համատեղ ուսուցման պատրաստակամության բացակայություն: Գծ. 10





ԲՄԹ-ի անդամների պատասխաններում գերակշռում էր «մասամբ», իսկ ուսուցիչների մոտ «այո» պատասխանը: Անհրաժեշտ է ծնողների մոտ ձևավորել դրական վերաբերմունք, քանի որ ուսուցման ընդհանուր գործընթացում նորմալ զարգացման ընթացք ունեցող երեխաները, շփվելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ, ձևավորում են հանդուրժողականություն, էմպատիա նրանց նկատմամբ, ձգտում օգնել նրանց, իսկ հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մոտ ցածրանում է ագրեսիվության և անհանդուրժողականության ռիսկը:

ԲՄԹ-ին ուղղված հետևյալ հարցին, թե արդյո՞ք ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողները տեղյակ են դպրոցում իրականացվող հոգեբանական խորհրդատվական աշխատանքներին, տրվել էին հետևյալ պատասխանները՝ այո- 5, ոչ- 0, մասամբ-7, տոկոսային հարաբերությամբ՝ այո- 42%, ոչ- 0%, մասամբ- 58%: Ուշագրավ էր այն, որ ծնողներին ուղղված հարցաթերթի մեջ ևս ներառել էինք նմանատիպ հարցադրում, նպատակ ունենալով անցկացնել համեմատություն այս հարցի վերաբերյալ և տրվել էին հետևյալ պատասխանները՝ այո- 12, ոչ- 0, մասամբ-8, տոկոսային հարաբերությամբ՝ այո- 60%, ոչ- 0%, մասամբ- 40%: Ուրախալի էր, որ ոչ մեկի կողմից չէր ընտրվել «ոչ» պատասխանը, համեմատության արդյունքում նկատվեց, որ արտահայտված տարբերություն կա «այո» և «մասամբ» պատասխանների միջև, ԲՄԹ- ի անդամները գտնում էին, որ ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողները մասամբ են իրազեկ դպրոցում իրականացվող աշխատանքներին, մինչդեռ ծնողների համար իրենց մասնակցությունը բավարար էր, ուստի անհրաժեշտ է ծնողների մոտ ձևավորել ավելի համագործակցային և պատասխանատու վերաբերմունք դպրոցի և իրենց երեխայի հետ անցկացվող աշխատանքների նկատմամբ:

ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների տեղեկացվածության մակարդակը դպրոցում իրականացվող աշխատանքներին:Գծ.11





Հաջորդ հարցը նույնպես ուղղված էր բազմամասնագիտական թիմի անդամներին և ծնողներին համեմատություն անցկացնելու համար՝ ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների հետ համատեղ ծրագրեր կազմու՞մ եք երեխայի մոտ առաջացած հոգեբանական խնդիրները լուծելու համար, և համապատասխանաբար նմանատիպ հարցադրում ուղղված ծնողներին, ԲՄԹ-ի կողմից տրվել էին հետևյալ պատասխանները՝ այո-4,

ոչ -3, երբեմն-7, տոկոսային հարաբերությամբ այո-29%, ոչ -21%, երբեմն-50%, իսկ ծնողների կողմից՝ այո-4, ոչ-9, երբեմն-7, տոկոսային հարաբերությամբ այո-20%, ոչ -45%, երբեմն-35%:

Գծ.12





Նմանատիպ հարցադրում ուղղված էր նաև ուսուցիչներին, որի նպատակն էր բացահայտել արդյո՞ք համագործակցում են ծնողների և բազմամասնագիտական թիմի անդամների հետ: Ուսուցիչների պատասխաններում գերակշռում էր «մասամբ» պատասխանը՝ 43%, ընտրել էին նաև մնացած տարբերակները՝ այո- 37%, ոչ- 20%: Այս երկու հարցերն էլ որոշակիորեն կապված են նախորդի հետ, վերլուծության արդյունքում կարող ենք նշել, որ համագործակցության մակարդակը ցածր է, և անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել վերջինիս բարձրացման համար:

Գծ. 13



Հաջորդ հարցը, որն ուղղված էր ծնողներին և ուսուցիչներին հետևյալն էր՝ ինչպե՞ս կգնահատեք դպրոցում ԿԱՊԿՈՒ երեխաների հետ անցկացվող աշխատանքների արդյունավետությունը: Ծնողների կողմից տրվել էին հետևյալ պատասխանները՝ գերազանց-4, լավ-7, բավարար-9, անբավարար-0, դժվարանում եմ պատասխանել-0, տոկոսային պատկերն այսպիսին է՝ գերազանց-20%, լավ- 35%, բավարար-45%, անբավարար-0, դժվարանում եմ պատասխանել-0: Իսկ ուսուցիչները միայն նշել են լավ-11, բավարար- 19, տոկոսային հարաբերությամբ՝ լավ- 37 %, բավարար- 63%: Երկու կողմերի պատասխաններում էլ գերակշռում էր «բավարար» և «լավ» պատասխանները:

Դպրոցում ԿԱՊԿՈՒ երեխաների հետ անցկացվող աշխատանքների արդյունավետության գնահատման տոկոսային պատկերը: Գծ. 14



Այն հարցին, թե ի՞նչն է ԿԱՊԿՈՒ երեխաների հետ անցկացվող աշխատանքների անբավարար արդյունավետության պատճառը, ուսուցիչների կողմից ընտրված պատասխանները ստացել էին հետևյալ տոկոսային պատկերը՝

ա) այդ երեխաների հետ անցկացվող աշխատանքի վերաբերյալ օրինակելի ծրագրի բացակայությունը -6 պատասխան (26%)

բ) այդ հարցին լուրջ ուշադրություն չդարձնելը -8 պատասխան(30%)

գ) մեթոդական ուղեցույցների բացակայությունը -7 պատասխան(27%)

դ) այլ պատասխան- 5 պատասխան (ժամանակի սղությունը)(17%)

Տրված պատասխաններից երևում է, որ ԿԱՊԿՈՒ երեխաների հետ անցկացվող աշխատանքների անարդյունավետությունը պայմանավորված է ներառական կրթության շահագրգիռ կողմերի անտարբերությամբ:

ԿԱՊԿՈՒ երեխաների հետ անցկացվող աշխատանքների անբավարար արդյունավետության պատճառը: Գծ.15



Հարցաթերթում ներառված հաջորդ հարցը՝ ուղղված ուսուցիչներին և ծնողներին, հետևյալն էր՝ արդյո՞ք գտնում եք, որ անհրաժեշտ է բարելավել դպրոցում ԿԱՊԿՈՒ երեխաների հետ իրականացվող աշխատանքները: Ուսուցիչների կողմից տրվել էին հետևյալ պատասխանները՝ այո-12, ոչ- 6, դժվարանում եմ պատասխանել- 12, տոկոսային պատկերը՝ այո-40%, ոչ-20%, դժվարանում եմ պատասխանել-40%, իսկ ծնողներից 7-ը (35%) ճշել են այո, 5-ը(25%)՝ոչ, 8-ը (40%)՝ դժվարանում եմ պատասխանել: Տրված պատասխաններից երևում էր, որ երկու կողմն էլ գտնում են, որ անհրաժեշտություն կա բարելավել դպրոցում ԿԱՊԿՈՒ երեխաների հետ անցկացվող աշխատանքների որակը:

Դպրոցում ԿԱՊԿՈՒ երեխաների հետ իրականացվող աշխատանքների բարելավման անհրաժեշտությունը: Գծ. 16



Հաջորդ հարցն ուղղված էր ուսուցիչների պատրաստվածության մակարդակի բացահայտմանը, հարցը ներառված էր և՛ ուսուցիչներին, և՛ ծնողներին ուղղված հարցաթերթերում, համեմատական անցկացնելու նպատակով: Արդյո՞ք գտնում եք, որ ունեք բավարար տեսական գիտելիքներ և պրակտիկ փորձ ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելու համար, և համապատասխանաբար ծնողներին ուղղված հարցն էր ՝ արդյո՞ք գտնում եք, որ ուսուցիչներն ունեն բավարար տեսական գիտելիքներ և պրակտիկ փորձ ԿԱՊԿՈՒ երեխաների

հետ աշխատելու համար: Ուսուցիչների կողմից տրվել էին հետևյալ պատասխանները՝ այո-6, ոչ-4, մասամբ-12, դժվարանում եմ պատասխանել-8, տոկոսային հարաբերությամբ՝ այո-20%, ոչ-13%, մասամբ-40%, դժվարանում եմ պատասխանել-27%, իսկ ծնողները նշել էին՝ այո-4, ոչ-5, մասամբ-11, դժվարանում եմ պատասխանել-0, տոկոսային հարաբերությամբ՝ այո-20%, ոչ-25%, մասամբ-55%, դժվարանում եմ պատասխանել-0%:

Գծ. 17



Պատասխաններից երևում էր, որ և՛ ծնողները, և՛ ուսուցիչները գտնում էին, որ ուսուցիչները դեռևս լիարժեք չեն տիրապետում ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքին և կարիք ունեն գիտելիքների և հմտությունների զարգացման:

Ուսուցիչներին ուղղված այն հարցին, թե որքանո՞վ են նրանք պատրաստակամ ունենալու իրենց ներդրումը ԿԱՊԿՈՒ երեխայի զարգացման, ինտեգրման, ադապտացման գործում, հարցվողները պատասխանել էին հետևյալ կերպ՝ լիովին- 7, մասամբ-19, պատրաստ չեմ-4, ստացված արդյունքների տոկոսային պատկերը՝ լիովին- 23 %, մասամբ- 64 %, պատրաստ չեմ- 13%: Ստացված տոկոսային պատկերը ցույց է տալիս, որ ուսուցիչների փոքր մասը լիովին, իսկ մեծամասնությունը՝ մասամբ էին պատրաստ իրենց ներդրումն ունենալ ԿԱՊԿՈՒ երեխաների ադապտացման մակարդակի բարձրացման գործում:

Գծ.18



Ուսուցիչներին ուղղված այն հարցին, թե ԿԱՊԿՈՒ երեխայի ադապտացմանը նպաստող ի՞նչ միջոցներ են կիրառում, տրվել էին հետևյալ պատասխանները՝ ադապտացման համար անհրաժեշտ է նրանց ներգրավել ուսումնական գործընթացին ամբողջապես, համատեղ աշխատանքներ անցկացնել համադասարանցիների հետ, ինչը հնարավոր չէ, քանի որ նրանց հետ առանձին ծրագրով պետք է աշխատել: Անհրաժեշտ է չտարանջատել երեխաներին, ավելի շատ ժամանակ տրամադրել, անցկացնել լրացուցիչ անհատական աշխատանքներ, զրույցներ, ավելի մեծ ջանքեր գործադրել դասապրոցեսն ավելի մատչելի ու արդյունավետ դարձնելու համար: Բարձրացնել հաղորդակցման մակարդակը, աշխատել ծնողների հետ, ցուցաբերել հավասարը հավասարին մոտեցում: Նշված պատասխաններից բացի կային նաև ուսուցիչներ, ովքեր նշել էին, որ երեխայի ադապտացմանը նպաստող ոչ մի միջոց չեն կիրառում:

Ուսուցիչներին ուղղված հաջորդ հարցը հետևյալն էր՝ ինչպիսի՞ խնդիրներ եք ունենում ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքի ընթացքում: Ուսուցիչները նշել էին հետևյալ խնդիրները՝ երեխային դասապրոցեսին ներգրավելու խնդիր, անկառավարելի վարքի դրսևորման խնդիրներ, ԿԱՊԿՈՒ երեխաները խանգարում են դասապրոցեսը, կային նաև ուսուցիչներ, ովքեր խնդիրներ չեն տեսնում: Իսկ առաջացած խնդիրների լուծման համար ուսուցիչների կողմից առանձնացվել էին հետևյալ պատասխանները՝

- Անհատական աշխատանքների կազմակերպում,
- առավել լուրջ մոտեցում ստեղծված իրադրությանը,
- ըստ առարկայական չափորոշիչների հատուկ դիդակտիկ պարագաների կիրառում,
- խնդիրներ ունեցող երեխաների ուղղորդում հատուկ մասնագետի մոտ,

Կային նաև բացասական միտում ունեցող պատասխաններ, ըստ որի հորդորում էին ԿԱՊԿՈՒ երեխաներին համախմբել հատուկ դպրոցներում, և խուսափել ցանկացած խնդրից:

Հաջորդ 3 հարցերն ուղղված էին ծնողներին՝ կա արդյո՞ք վստահություն մասնագետների կողմից իրականացվող աշխատանքների նկատմամբ. այո- 10, ոչ- 0, մասամբ- 10, տոկոսային հարաբերությամբ՝ այո- 50%, ոչ- 0%, մասամբ- 50%:

Գծ. 19



Այն հարցին, թե ինչպիսի՞ լրացուցիչ հմտություններ և կարողություններ են անհրաժեշտ ներառական կրթության համակարգում աշխատող մասնագետներին, նշված տարբերակները ստացել էին հետևյալ տոկոսային պատկերը՝

ա) համբերատարություն և երեխայակենտրոն մոտեցումների տիրապետում,-7պատասխան (35%)

բ) հաշմանդամություն ունեցող երեխաների զարգացման առանձնահատկություններին վերաբերյալ հատուկ գիտելիքների տիրապետում,

- 5 պատասխան (25%)

գ) մասնագետների և սոցիալական այլ կառույցների հետ համագործակցության կարողություն-3 պատասխան(15%)

դ) խնդրահարույց իրավիճակներում ճիշտ և արդյունավետ լուծումների կայացման կարողություն -5 պատասխան(25%)

Պատասխաններից երևում է, որ նշված բոլոր տարբերակներն էլ որոշակիորեն թերի են և անհրաժեշտություն է նկատվում լրացուցիչ հմտությունների և կարողությունների ձևավորման:

Գծ. 20



Հաջորդ հարցը հետևյալն էր՝ ի՞նչ ակնկալիքներ ունեք դպրոցում տարվող աշխատանքից, ինչպե՞ս կազդի ներառական կրթական համակարգի ներմուծումը երեխայի վրա, տրվել էին պատասխանների հետևյալ տոկոսային պատկերը՝

ա) կկարողանան հասակակիցների կողմից լրացուցիչ աջակցություն ստանալ-

5 պատասխան (25%)

բ) կսկսեն ավելի լիարժեք զգալ իրենց, ունենալով հավասար հնարավորություններ

այլ երեխաների հետ- 7 պատասխան (35%)

գ) հնարավորություն կունենան դրսևորել իրենց հմտությունները շփման ավելի լայն շրջանակներում- 4 պատասխան (20%)

դ) կսովորեն համագործակցել այլ երեխաներ հետ- 4 պատասխան (20%)

ե) այլ պատասխան- 0%

Գծ.21



Հաջորդիվ ներկայացված հարցերն ուղղված էին ԲՄԹ-ի անդամներին: Դրանք էին՝

Ինչպիսի՞ միջոցներ, ուղիներ եք գտնում ուսուցիչների հետ աշխատելու համար: Պատասխաններ. Համագործակցություն, տվյալ աշակերտի խնդրից ելնելով, քանի որ համագործակցելը շատ կարևոր նախապայման է: Սեմինարների միջոցով իրազեկում, զրույցներ, խորհրդատվություններ կախված երեխայի խնդրից և ուսուցչի վերաբերմունքից:

Ի՞նչ միջոցառումներ եք կազմակերպում երեխայի սոցիալականացման ապահովման ուղղությամբ:

Պատասխաններ. Ամբողջ դասարանի հետ զրույցների, միջոցառումների կազմակերպում, որը միտված է ճշված նպատակին: Ֆիլմի դիտում և՛ ԿԱՊԿՈՒ, և՛ նորմալ զարգացում ունեցող երեխաների հետ: Երեխաների մոտ հանդուրժողականության ձևավորում:

Հոգեբանական ի՞նչ մեթոդներ, թերապիաներ եք կիրառում ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելիս:

Պատասխաններ. Անհատական և խմբային աշխատաքներ, դիտման, զրույցի մեթոդ, տարբեր թերապիաների կիրառում՝ նկարչաթերապիա, ավազաթերապիա, հեքիաթաթերապիա, երաժշտաթերապիա, հոգեբանական խաղեր, դիդակտիկ պարագաների, թեստերի, քարտային խաղերի կիրառում:

Ինչպիսի՞ խնդիրներ եք տեսնում ծնողների հետ աշխատելիս:

Պատասխաններ. Ծնողների հետ համագործակցության պակաս, չեն սիրում համագործակցել և իրական դաշտում տեսնել ու ընդունել իրենց երեխայի խնդիրը: Չեն կարողանում ճիշտ գնահատել իրենց երեխայի խնդիրը: Անտեղյակ են, երբեմն ճիշտ չեն հասկանում մասնագետների կատարած աշխատանքը և թելադրում

են իրենց կամքը: Չեն գիտակցում բուն խնդիրը կամ չեն ուզում բարձրաձայնել: Ծնողն ակնկալում է ավելին, քան օբյեկտիվորեն սպասվում է: Ծնողն ամեն կերպ փորձում է իր երեխայի խնդրի համար մեղադրել այլ մարդկանց կամ դպրոցին: Ծնողների մոտ նկատվում է շտապողականություն, ցանկանում են շատ արագ արդյունք տեսնել իրենց երեխաների մոտ, հաշվի չառնելով երեխայի խնդիրը:

Ըստ Ձեզ սոցիալական միջավայրում որո՞նք են հանդիսանում խոչընդոտող գործոններ երեխաների արդյունավետ հաղորդակցման համար:

Պատասխաններ. Անհանդուրժողականություն, հաղորդակցման ցածր մակարդակ, դժվարություններ, վստահության պակաս, անլիարժեքություն, հասարակության իրազեկվածության պակաս, բացասական վերաբերմունք, ծաղր, ներառականության մասին ոչ լիարժեք պատկերացումներ, սխալ գիտակցում:

Եվ վերջին հարցը, որն ընդհանուր էր հարցվող բոլոր կողմերի համար, հետևյալն էր՝ ԿԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու համար ինչպիսի՞ առաջարկներ ունեք:

Ծնողներ՝

- կազմակերպել վերապատրաստումներ ուսուցիչների համար, բարձրացնել իրազեկվածության մակարդակը
- հաճախակի կազմակերպել սեմինար պարապմունքներ ծնողների և ուսուցիչների հետ
- ավելի պատրաստակամ մասնագիտական ռեսուրսների ավելացում

Ուսուցիչներ՝

- հստակեցնել ԿԱՊԿՈՒ երեխաների կրթական ծրագիրը,
- անհրաժեշտ է ստեղծել ավելի բարենպաստ պայմաններ, համապատասխան միջավայր
- լրացուցիչ աշխատանքներ անցկացնել ծնողների և երեխաների հետ,
- սերմանել ընկերասիրություն, հանդուրժողականություն, հոգատարություն ԿԱՊԿՈՒ երեխաների նկատմամբ,
- անցկացնել մասնագիտացված ուսուցիչների մասնակցությամբ, հատուկ մշակված ծրագրով ուսուցում,
- աշխատանքում ներգրավվել հատուկ պատրաստվածություն ունեցող, գիտակ մասնագետների,
- մտավոր հետամնացություն ունեցողներին ուղարկել հատուկ դպրոցներ

ԲՄԹ՝

- հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացում,
- հանդուրժողականության ձևավորում և սերմանում,

- ներառական կրթության համակարգում աշխատելու ժամանակակից և արդյունավետ մեթոդներին վերաբերող վերապատրաստումների, սեմինարների կազմակերպում մասնագետների, ուսուցիչների համար,
- սոցիալ- կենցաղային հմտությունների զարգացում,
- անցկացնել ամենօրյա անհատական պարապմունքներ, համագործակցելով երեխայի հետ աշխատող բոլոր կողմերի հետ,
- օրենքի վերանայում, ներառական կրթության համակարգի ճիշտ ներկայացում,
- կրթական կոնկրետ ծրագրերի կազմում, ճիշտ մատուցում, խնդիրների տարաբնույթ ուղիների որոնում, մշակում և իրականացում:

Այսպիսով, հետազոտական աշխատանքի առաջին փուլում իրականացվեց դպրոցում ներառական կրթության իրականացման պայմանների, աշխատանքների կազմակերպման ու իրականացման ձևերի ծանոթացում, իրականացվեց կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ տարվող աշխատանքների ուսումնասիրություն և վերլուծություն, ուսումնասիրվեցին ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքի ձևերը, մեթոդները ու մեխանիզմները, դրանց կիրառման առանձնահատկությունները: Ընտրելով հետազոտվող երեխաների խումբ իրականացվեցին դիտարկումներ, անհատական, խմբային աշխատանքներ, կախված երեխաների անհատական առանձնահատկություններից կիրառվեցին տարբեր խաղ-վարժանքներ, թեստեր, քարտային խաղեր, արտ-թերապևտիկ մեթոդներ: Մի մեխանիզմը երեխաներից մեկի հետ աշխատանքում արդյունավետ էր, մյուսի դեպքում՝ ոչ, քանի որ երեխաները ունեին տարբեր հետաքրքրությունների շրջանակ: Ամենակարևորը երեխաների հետաքրքրությունների շրջանակն ամրագրելն էր և երեխայի հետ հետագա աշխատանքները կառուցել ոչ թե նրա անկարողությունների, խնդիրների, այլ հետաքրքրությունների շրջանակի, դրական կողմերի հիմքի վրա:

Երեխաների՝ դպրոցի հանդեպ ունեցած վերաբերմունքի, նրանց սոցիալականացման, հարմարվածության մակարդակի բացահայտման, ինչպես նաև ընկերության մեջ փոխօգնության գաղափարի, հանդուրժողականության ձևավորման, հաղորդակցման հմտությունների զարգացման նպատակով կիրառվեցին տարբեր մեթոդիկաներ՝ «Հաղորդակցում՝ նկարների փոխանակման միջոցով» մեթոդիկա, «Օգնության ձեռքեր» վարժություն, «Դպրոցի նկար» պրոյեկտիվ թեստ:

Հետազոտության հաջորդ փուլում իրականացվեցին հարցումներ ՝ ի սկզբանե մշակված հարցաթերթերի (անկետաների) միջոցով, որոնք ուղղված էին ծնողներին, ուսուցիչներին և բազմամասնագիտական թիմին:

Ծնողների հետ անցկացրած հարցումների արդյունքում եկանք այն եզրահանգման, որ ծնողների մեծամասնության կարծիքով ներառական կրթությունը մասամբ է ապահովում հավասար հնարավորություններ

երեխաների համար, մասամբ է նպաստում ԿԱՊԿՈՒ երեխայի զարգացմանը, դեռևս ամբողջովին հստակեցված չէ և կան շատ խնդիրներ: Ծնողներից շատերի կարծիքով անհրաժեշտ է հստակեցնել գործող համակարգը, բարելավել դպրոցում ԿԱՊԿՈՒ երեխաների հետ անցկացվող աշխատանքների որակը, բարձրացնել իրազեկվածության մակարդակը, բարձրացնել ուսուցիչ- բազմամասնագիտական թիմ- ծնող համագործակցության մակարդակը: Բայց այնուամենայնիվ ծնողների կողմից նշվել էր նաև, որ ներառական կրթության ճիշտ կազմակերպումը հնարավորություն կտա ԿԱՊԿՈՒ երեխային ավելի լիարժեք զգալ, դրսևորել իրենց հմտությունները շփման ավելի լայն շրջանակներում, կսովորեն համագործակցել այլ երեխաների հետ, ինչը հնարավորություն կտա բարձրացնել ԿԱՊԿՈՒ երեխայի սոցիալականացման մակարդակը:

Ուսուցիչների հետ անցկացրած հարցումների արդյունքում ստացված պատասխաններից կարող ենք եզրակացնել, որ ուսուցիչները նույնպես մասամբ են ընդունում ներառական կրթության համակարգը: Ուսուցիչների որոշ մասը լիովին պատրաստ են իրենց ներդրումն ունենալ ԿԱՊԿՈՒ երեխաների զարգացման, ադապտացման, սոցիալականացման գործընթացում, սակայն մեծամասնությունը մասամբ էին պատրաստակամ և մասամբ էին կարևորում իրենց դերը ԿԱՊԿՈՒ երեխայի զարգացման գործում: Ուսուցիչների կարծիքով դպրոցում գործող համակարգի բացթողումները կապված են տեղեկացվածության ցածր մակարդակի, համագործակցելու պատրաստակամության բացակայության հետ: Հարցվող ուսուցիչների մեծամասնությունը պատրաստ չէ ընդունել ԿԱՊԿՈՒ երեխաների ներկայությունը նորմալ զարգացում ունեցող երեխաների հետ նույն դասարանում, ինչն էլ մեծ խոչընդոտ կարող է լինել ԿԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացման գործընթացի արդյունավետ կազմակերպման համար:

Բազմամասնագիտական թիմի անդամների լրացրած հարցաթերթերի վերլուծության արդյունքում նկատվեցին որոշակի հակասություններ հարցվող մյուս կողմերից տրված պատասխանների հետ համեմատ: Նախ և առաջ ԲՄԹ-ի անդամները լիովին կարևորում են ներառական կրթական համակարգի դերը: Անկախ գործող համակարգի խնդիրներից, նրանց կարծիքով ներառական կրթությունը արդյունավետ է ԿԱՊԿՈՒ երեխայի զարգացման համար և ԿԱՊԿՈՒ երեխաների ուսումնական գործընթացի կազմակերպումը նորմալ զարգացում ունեցող երեխաների հետ նպաստում է վերջիններիս սոցիալականացմանը: ԲՄԹ-ի անդամները նշել են, որ նորմալ զարգացում ունեցող երեխաները հանդուրժող են ԿԱՊԿՈՒ երեխաների նկատմամբ, սակայն նշել են նաև, որ որոշ դեպքերում կա կարծրատիպային, խտրական մոտեցում, ինչը բացասաբար է ազդում երեխայի վրա: ԲՄԹ-ի կարծիքով ուսուցիչները և ծնողները մեծ դեր ունեն երեխայի զարգացման գործում, սակայն ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողները մասամբ են իրազեկ դպրոցում իրականացվող աշխատանքներին, չեն սիրում համագործակցել և իրական դաշտում տեսնել ու ընդունել, ճիշտ գնահատել

իրենց երեխայի խնդիրը, իսկ ուսուցիչները մասամբ են պատրաստ համագործակցել, երբեմն չեն հանդուրժում ԿԱՊԿՈՒ երեխայի մասնակցությունը դասապրոցեսին, սակայն և՛ ծնողները, և՛ ուսուցիչները իրենց մասնակցությունն ու ներդրումը բավարար են համարում:

Հարցաթերթերում ներառված էին նաև այնպիսի հարցեր, որոնց նպատակն էր բացահայտել հաղորդակցման դերը ԿԱՊԿՈՒ երեխայի սոցիալականացման գործընթացում: Հարցվողների կողմից տրված պատասխաններից պարզ դարձավ, որ հաղորդակցումը լիովին կարևորվում է ԿԱՊԿՈՒ երեխայի սոցիալականացման գործընթացում: ԿԱՊԿՈՒ երեխաների մոտ հաղորդակցման հմտությունների զարգացումը դրական փոփոխությունների է հանգեցնում՝ ապահովում է առավել լիարժեք շփում հասակակիցների հետ, երեխաների մոտ ձևավորվում է բարձր ինքնագնահատական, նրանք դառնում են ավելի անկաշկանդ, համարձակ, ինքնավստահ, սոցիալականացված: Սակայն սոցիալական միջավայրում կան նաև խոչընդոտող գործոններ երեխաների արդյունավետ հաղորդակցման համար՝ հասարակության իրազեկվածության պակաս, բացասական վերաբերմունք, ծաղր, ներառականության մասին ոչ լիարժեք պատկերացումներ, սխալ գիտակցում, անհանդուրժողականություն:

Ստացված արդյունքները փաստում են, որ հաղորդակցմանը խոչընդոտող գործոնների վերացումը և ԿԱՊԿՈՒ երեխաների հաղորդակցման ռազմավարությունների արդյունավետ օգտագործումը կնպաստի վերջիններիս սոցիալականացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով ԿԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացման գործընթացի առանձնահատկությունների ուսումնասիրությունը՝ կարող ենք նշել, որ հետազոտության տվյալների հոգեբանական վերլուծության արդյունքում հաստատվեց հետազոտության վարկածն այն մասին, որ ԿԱՊԿՈՒ երեխաների հաղորդակցմանը խոչընդոտող գործոնների վերացումը և հաղորդակցման ռազմավարությունների արդյունավետ օգտագործումը կնպաստի վերջիններիս սոցիալականացմանը:

Հոգեբանամանկավարժական և մեթոդական գրականության տեսական վերլուծությունը, անցկացված փորձարարական հետազոտությունը և ստացված արդյունքների հոգեբանական վերլուծությունը թույլ են տալիս կատարել հետևյալ եզրակացությունները՝

1.Սոցիալականացման գործընթացի վերաբերյալ տարբեր տեսաբանների դիրքորոշումների ուսումնասիրությունը հնարավորություն տվեց ընդհանրացնել սոցիալականացման գործընթացի առանձնահատկությունները, այն իրենից ներկայացնում է անհատի հարաբերակցումը սոցիումի հետ, մարդու ձևավորման չկառավարվող գործընթաց, որը կայանում է շրջապատի հետ մարդու տարերային փոխներգործության պայմաններում, անհատի կողմից հասարակական փորձի յուրացման և վերարտադրման գործընթաց, որի արդյունքում անձը ձեռք է բերում կյանքի համար անհրաժեշտ հոգեկան որակներ, գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, այդ թվում նաև խոսք և որն իրագործվում է հաղորդակցման տարբեր ձևերի և մակարդակների իրականացման ճանապարհով:

2.Ընդհանրացնելով ԿԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացմանը խոչընդոտող և նպաստող պայմաններն ու գործոնների ուսումնասիրությունը կարող ենք եզրակացնել, որ եթե վերացվեն ԿԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացմանը խոչընդոտող գործոնները, ինչպիսիք են՝ սոցիալական միջավայրի հետ սահմանափակ կապերը, շրջապատի կողմից բացասական վերաբերմունքը, անտեղյակությունը, ճշգրիտ կրթական ստանդարտների բացակայությունը, անբավարար նյութատեխնիկական հագեցվածությունը, հնարավորությունների անհավասարությունը, հաղորդակցման, շփման պակասը կամ բացակայությունը, ուսուցիչների, ծնողների պատրաստակամության բացակայությունը, համագործակցության պակասը, ապա ԿԱՊԿՈՒ երեխայի սոցիալականացման գործընթացը առավել արդյունավետ կլինի

3.Ընտրվել են ԿԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացման մակարդակի բացահայտման համապատասխան մեթոդներ, ուսումնասիրվել են ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքի ձևերը, մեթոդներն ու մեխանիզմները, դրանց կիրառման առանձնահատկությունները, ընտրվել է հետազոտվող երեխաների խումբ, իրականացվել են դիտումներ, անհատական, խմբային աշխատանքներ, կախված երեխաների անհատական

առանձնահատկություններից, կիրառվել են տարբեր խաղ-վարժանքներ, թեստեր, քարտային խաղեր, արտ-թերապևտիկ մեթոդներ, որոնք հնարավորություն տվեցին բացահայտել երեխաների՝ դպրոցի հանդեպ ունեցած վերաբերմունքը, նրանց սոցիալականացման, հարմարվածության մակարդակը, խթանեցին ընկերության մեջ փոխօգնության գաղափարի, հանդուրժողականության ձևավորմանը, հաղորդակցման հմտությունների զարգացմանը:

4. Անցկացնելով հարցումներ ծնողների, ուսուցիչների և բազմամասնագիտական թիմի շրջանում կարողացանք պարզել վերջիններիս դիրքորոշումը ներառական կրթության վերաբերյալ, նրանց պատրաստվածության ու պատրաստակամության մակարդակը ներառական կրթության իրականացման գործում, ԿԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացմանը նպաստող և խոչընդոտող գործոնները, հաղորդակցման դերը ԿԱՊԿՈՒ երեխայի սոցիալականացման գործընթացում: ԿԱՊԿՈՒ երեխայի զարգացման և սոցիալականացման գործում շատ կարևոր է վերջիններիս համագործակցված և աշխատանքը, սակայն դեռևս մասամբ է նկատվում շարունակական համագործակցային հարաբերություններ, մասամբ են պատրաստակամ ունենալ իրենց ներդրումը երեխայի զարգացման և սոցիալականացման գործընթացում, ներառական կրթության գաղափարախոսությունը դեռևս ոչ միշտ է ճիշտ ընկալվում, հստակ մշակված չեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների գնահատման չափանիշերն ու սկզբունքները, ուստի անհրաժեշտ է մշակել համագործակցված և արդյունավետ աշխատելու նոր ուղիներ:

5.Ստացված տեսական և փորձարարական արդյունքների ընդհանրացման միջոցով կարող ենք եզրակացնել, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների սոցիալականացման գործընթացում շատ կարևոր է հաղորդակցման դերը, քանի որ հաղորդակցումը համարվում է սոցիալականացման հիմքը և հաղորդակցման ռազմավարությունների կիրառումը, ինչպիսիք են երկխոսության ձևավորումը, ընտրություն կատարելու հնարավորության ընձեռումը, մտածելու համար ավելի երկար ժամանակի տրամադրումը, գործողությունների ռեժիմի մշակումը, որոնք ունեն հստակ սկիզբ, ընթացք և ավարտ, օրացույցների կազմումը, ինչպես նաև նոր ռազմավարությունների մշակումն ու կիրառումը՝ ըստ յուրաքանչյուր երեխայի անհատական առանձնահատկությունների, կնպաստի ԿԱՊԿՈՒ երեխայի սոցիալականացմանը:

Առանձնացվել են նաև ԿԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու համար առաջարկներ՝

Առաջարկ 1. Սեմինարների, միջոցառումների, թրեյնինգների, սոցիալական գովազդների հաճախակի կազմակերպում, ինչը հնարավորություն կտա բարձրացնել հասարակության իրազեկվածության մակարդակը ներառական կրթության և վերջինիս ընձեռած հնարավորությունների մասին:

Առաջարկ 2. Ներառական կրթության համակարգում աշխատելու ժամանակակից և արդյունավետ մեթոդներին վերաբերող վերապատրաստումների, սեմինարների կազմակերպում ծնողների, առարկայական ուսուցիչների, մասնագետների համար:

Առաջարկ 3. Կրթական կոնկրետ ծրագրերի կազմում, ճիշտ մատուցում, խնդիրների տարաբնույթ ուղիների որոնում, մշակում և իրականացում:

Առաջարկ 4. ԿԱՊԿՈՒ երեխայի հետ աշխատող բոլոր կողմերի միջև կայուն համագործակցային փոխհարաբերությունների կառուցում, վերջիններիս կողմից սեփական դերի գիտակցում, հանդուրժողականության, պատրաստակամության, հոգատարության ձևավորում:

Առաջարկ 5. Հաղորդակցման ռազմավարությունների մշակում և շարունակական կիրառում՝ ըստ ԿԱՊԿՈՒ երեխայի անհատական առանձնահատկությունների:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ազարյան Ռ. Ն, Ավագյան Ա. Վ., «Հատուկ մանկավարժություն», Երևան 2016, 430 էջ:
2. Ազարյան Ռ., Կատինյան Վ., Մելքոնյան Կ. և ուրիշ., ‹‹Հատուկ կրթություն: Մեթոդական տեղեկատու››: Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն.-Եր.: Պոլիգրաֆբիզնես, 2013: Մաս 7.-88 էջ:
3. Գևորգյան Ս., Ազարյան Ռ., Ավագյան Ա. և ուրիշներ, «Ներառական կրթություն, ժամանակակից խնդիրներն ու մարտահրավերները», միջազգային գիտագործնական գիտաժողովի հոդվածների ժողովածու, 408 էջ:
4. Երեխաներ, սոցիալ-հոգեբանական զարգացում, Մեթոդական ձեռնարկ/ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ, Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ, Եվրոպական միություն, World Vision Հայաստան.Երևան, ԵՄ ՎՎՀ, 2013, 116 էջ:
5. Զաքարյան Գ., Եպիսկոպոսյան Ա., Երեխաների վերականգնողական բուժում, Արաբկիր բժշկական կենտրոն, Եր., 2008: